ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 փետրվարի 2026 թվականի N 152 - Ն

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՌԵԵՍՏՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Կիբեռանվտանգության մասին» օրենքի 7-րդ հոդվածի 8-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել տեղեկատվական տեխնոլոգիաների ակտիվների ռեեստրի ստեղծման և կառավարման համակարգի ներդրման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշման հավելվածի 1-ին կետում նշված կազմակերպությունների ղեկավարներին՝

1) տեղեկատվական տեխնոլոգիաների ակտիվների կառավարման, գույքագրման, նույնականացման, պահպանման և վերահսկման գործընթացներում առաջնորդվել սույն որոշման հավելվածի պահանջներով.

2) սույն որոշման հավելվածով նախատեսված ժամկետներում և կարգով Տեղեկատվական համակարգերի կարգավորման հանձնաժողով ներկայացնել տեղեկատվական տեխնոլոգիաների ակտիվների վերաբերյալ սույն որոշման հավելվածով սահմանված տեղեկատվությունը.

3) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո ոչ ուշ, քան երեք ամսվա ընթացքում, ավարտել տեղեկատվական տեխնոլոգիաների ակտիվների ռեեստրի ներդրման աշխատանքները:

3. Սույն որոշման հավելվածի 1-ին կետում նշված հանրային հատվածի կազմակերպությունների ղեկավարներին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո ոչ ուշ, քան երեք ամսվա ընթացքում ապահովել իրենց ենթակայության տակ գտնվող պետական ոչ առևտրային կազմակերպություններում և հարյուր տոկոս պետական մասնակցությամբ ընկերություններում սույն որոշման հավելվածի պահանջների կատարումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

13.02.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ